կամ ի՞նչ տեղերի հետ հաղորդակցութիւն ունեն. խօսում էին նաւակների թոի եւ նրանց փոխադրած ծանրութիւնների քանակութեան մասին, թէ տարոայ ընթացքում որքա՞ն մթերքներ կարող են փոխադրել, այդ բոլորի մասին, ի հարկէ, հաշիւ ու համար տալիս էր գլխաւորապէս Բերզէն-օղլին: Նա այնպէս լաւ ուսումնասիրել էր ծովակը եւ նրա շրջակայքը, որպէս մի լաւ վարժապետ ուսումնասիրում է իր դասագիրքը: Նրան ծանօթ էին ծովակի բոլոր խորշերը, բոլոր եզերքը եւ այն բոլոր դիրքերը, որտեղից կարելի էր ցամաքի հետ յարաբերութիւն ունենալ: Ասլանը իր լսածներից այն եզրակացութիւնն էր դուրս բեռում, թէ երկու առագաստաւոր նաւեր բաւական կը լինեն կատարելու այն գործը, ինչ որ կատարում են բազմաթիւ նաւակներն ու սանդալները:

Նրանք խօսում էին, դատում էին, վիճում էին, իսկ ես համարեա չէի լսում: Ես չէի կարողանում մոռանալ Քոթոթի տոած տեղեկութիւնները իր մօր մասին, եւ նրա վրայ էի մտածում: Ասլանը այն օրը տան ներսի սենեակներից դուրս գալու ժամանակ ինձ ասաց, թէ այնտեղ մի հիւանդ կայ, դա, անտարակոյս, նաւավարի կինը պէտք է լինէր, բայց Քոթոթի տոած տեղեկութիւնները այդ հիւանդի դրութեան մասին՝ բաւական կասկածաւոր էին դարձնում նրան: Այնտեղ անպատճառ մի բան պէտք է լինի, մտածում էի ես:

Մեզ ընթրիք տալուց յետոյ տանեցիք, այսինքն Ծովիկը եւ Քոթոթը, գնացին կտուրի վրայ քնելու: Գիւղացի երեխաները քնում են արեւի հետ եւ զարթնում են նրանից առաջ: Սրահի մէջ մեզ համար եւս քնելու անկողիններ պատրաստեցին: Սրահը, որ պատշգամբի նախնական ձեւն է, շատ յարմարութիւն ունի ամառնային կեցութեան համար. այնտեղ ե՛ւ հով է, ե՛ւ մաքուր օդ կայ, ե՛ւ անքուն գիշերներում մարդ չէ տաղտկանում, նայում է աստղազարդ երկնքի վրայ, զարճանում է անթիւ լուսաւորներով: Իսկ այն գիշերը ինձ աւելի գրաւում էր այն խուլ, խորհրդաւոր ձայնը, որ լսւում էր օդի մէջ. դա ծովակի ալիքների ձայնն էր, որ գալիս էր հեռոից:

Հիւսնի արհեստանոցում գործը դադարել էր, այնտեղից ձայն չէր լսւում: Բայց արհեստանոցի բաց դռնից ճրագի լոյս էր երեւում: Ծերունի արհեստաւորը, երեւի, դեռ չէր քնած: Նաւավարը Ասլանին եւ վարպետ Փանոսին տարաւ այնտեղ մի քանի բաներ ցոյց տալու համար: Ես չգնացի. ես արդէն ցերեկով տեսել էի այն տախտակների եւ փայտերի մթերանոցը, եւ դրանք ինձ համար մի առանձին նշանակութիւն չունէին: Ես պառկած մնացի իմ անկողնի վրայ եւ իսկոյն քունս տարաւ:

Մի օտարոտի ձայն զարթեցրեց ինձ: Որքա՞ն ժամանակ անցել էր գիշերից, չգիտեմ, բայց աքաղաղները խօսում էին: Գլուխը վեր բարձրացրի,